Արձանագրություն N 3

«ՇՄԳՄՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/4-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Գյումրի	10 հոկտեմբերի 2018թ., ժ 13:24

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Հմայակյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Մելքոնյան
	Լ. Հովհաննիսյան
	Ա. Պապոյան
	Դ. Սարոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Բաղալյան

1. ***<u>Ընդունել ի գիտություն</u>***

ՀՀ Կառավարության 14 մայիսի 2017թվականի <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների,աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին>> թիվ 534-Ն որոշման /այսուհետ՝ Կարգ/ 3 և 4 ենթակետերի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 04.10.2018թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:
Գնահատող հանձնաժողովի 03.10.2018թ. թիվ 4.4 որոշմամբ էլեկտրոնային փոստի միջոցով նիստին հաջորդող աշխատանքային օրը առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի "զ" պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը/հավելված 2 և 3 /կցվում է/:

2. ***<u>Հանձնաժողովն արձանագրեց</u>***

Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:
Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում eauction էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:

3. ***<u>Հանձնաժողովը որոշեց</u>***
<u>Հիմք ընդունելով վերոգրյալը՝</u>

3.1 Հաղթող մասնակից ճանաչել

թիվ 2, 3 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ին

թիվ 5 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<Թեոֆարմա>> ՍՊԸ-ին

թիվ 6,7 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ին

Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը/կցվում է/:
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն էլեկտրոնային աճուրդի դեպքում թիվ 5 չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, բացառությամբ թիվ 2, 3, 6 և 7 չափաբաժինների անգործության ժամկետ չի սահմանվում:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0

3.3 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 17:00-ին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հմայակյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մելքոնյան

Լ. Հովհաննիսյան

Ա. Պապոյան

Դ. Սարոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաղալյան